

1918 թվականի հայ-վրացական պատերազմը

Հովհաննիսյան Հ. Հ.

ՀՀ Ծիրակի մարզի Կառնուտի միջնակարգ դպրոցի տնօրեն, պատմության ուսուցիչ, ուսուցչի որակավորման 2-րդ աստիճանի տարակարգ, «Տարվա լավագույն ուսուցիչ» (2014)
(գ. Կառնուտ, Ծիրակի մարզ, ՀՀ)
hhovhannisyan333@gmail.com

Հանգուցաբառեր: Հայ-վրացական պատերազմ, Անդրկովկաս, Հայաստան, Վրաստան, Լոռի-Ախալքալաք, Բորչալու, տարածքային վեճեր, ռազմական գործողություններ, Հայաստանի առաջին Հանրապետություն, Հովհաննես Բաջազնունի:

Армяно-грузинская война 1918 года

Оганнисян А. А.

директор Карнутской средней школы Ширакского марза, учительница истории, педагог 2-й квалификационной категории, “Лучший учитель года” (2014) (с. Карнут, Ширакского марза РА)
hhovhannisyan333@gmail.com

Аннотация: В статье представлены исторические причины возникновения армяно-грузинской войны 1918 года, новая геополитическая ситуация в Закавказье в конце Первой мировой войны, «несоразмерное территориальное размежевание между грузинами, армянами и кавказскими мусульманами». Упомянуты четырехдневные столкновения октября 1918 года, дипломатические усилия, и объясняется имевшее место в то время, неизбежность войны, разразившейся двумя месяцами позже. Показано участие англо-французских сторон в войне декабря 1918 года, особенно с целью пресечь успешный ход армянской стороны и по возможности прекратить боевые действия. Представлены начало, ход и конец боевых действий. Во время боевых действий армянская сторона, соблюдая все нормы ведения войны, реализует стратегию по спасению армянского населения от депортации и уничтожения. Начало декабрьской войны – 13 декабря 1918 года, почти ежедневное течение которой несли потери и достижения, приводятся в статье. Благодаря усилиям командующего закавказскими войсками союзников, генерала Томсона, окончание могло быть завершено 16 декабря, однако грузинская сторона не была склонна к компромиссному варианту и посредническая миссия капитана Грина проваливается. Свою боевую поддержку и службу в армянской армии осуществляют два российских командира – Нестеровский и Корольков. Несмотря на соглашение, подписанное 25 декабря английским генералом Райкрофтом и французским полковником Шардином и Жорданием, согласно которому прекращались военные действия, грузинская сторона продолжает наступление. Боевые действия продолжаются до 12:00 31 декабря 1918 года. После окончания войны армянская делегация отправляется в Тифлис для участия в январской конференции. В статье приводятся цитаты в пользу решения вопроса путем переговоров, которые приведены из письменных обращений и ответных писем членов правительства Первой Республики Армения, в частности, первого премьер-министра Первой Республики Армения Ованеса Каджазнуни, министра иностранных дел Сиракана Тиграняна, председателя делегации Армении Мартироса Арутюняна. В цитатах авторы приводят обоснованные доводы о правах армян на спорные территории, а также о причинах компромиссов, приоритетной выгодой считается не только уважение прав армянского народа и решение вопроса территориальной принадлежности, но и установление и поддержание мира и стабильности в регионе, в частности, в Закавказье. В заключение делается вывод о том, что нужно всегда надеяться на собственный народ и оружие, никогда не ожидать миротворческой миссии или поддержки какого-либо государства.

Ключевые слова: Армяно-грузинская война, Закавказье, Армения, Грузия, Лори-Ахалкалаки, Борчалу, территориальные споры, военные действия, Первая Республика Армения, Ованес Каджазнуни.

The Armenian-Georgian War of 1918

Hovhannisyan H. H.

director of the Karnut secondary school Region Shirak, history teacher, II Degree of Teacher Qualification Category, The Best Teacher of RA for 2014, (v. Karnut, Region Shirak RA)
hhovhannisyan333@gmail.com

Abstract. The article presents the historical reasons for the origin of the Armenian-Georgian war in 1918, the new geopolitical situation in Transcaucasia at the end of the First World War, the "disproportionate territorial demarcation between Georgians, Armenians and Caucasian Muslims." The four-day confrontations in October, the diplomatic efforts made during that time, explain the inevitability of the war that broke out two months later. The involvement of the British-French sides in the December War of 1918 is shown, especially in order to stop the successful course of the Armenian side and to stop the hostilities as much as possible. The beginning, the course and the end of the hostilities are presented. During the hostilities, the Armenian side, observing all the norms of war, implements a strategy to save the

Armenian population from deportation and destruction. The beginning of the war is the thirteenth of December 1918, the almost daily course of which losses and gains is presented in the article. Due to the efforts of the commander of the Transcaucasian troops, General Thomson, December 16 could have come to an end, but the Georgian side was not inclined to compromise; Captain Green's mediation mission failed. Two Russian commanders, Nesterovsky and Korolkov, provide military assistance and service in the Armenian army. Despite an agreement signed by British General Rycroft, French Colonel Chardin and Jordan on December 25 to end hostilities, the Georgian side continues to attack. The fighting continues until at 12:00 AM on December 31, in 1918. After the war, the Armenian delegation left for Tiflis (Georgia) to participate in a conference in January. The article contains quotations in favor of resolving the issue through negotiations, which are taken from the written applications and reply letters of the members of the Government of the First Republic of Armenia, in particular, the First Prime Minister of the First Republic of Armenia Hovhannes Kajaznuni, Minister of Foreign Affairs Sirakan Tigranyan, Chairman of the Armenian delegation Martiros Harutyunyan. In the quotations, the authors make well-founded arguments about the rights of Armenians to the disputed territories, as well as the reasons for making compromises. It is important not only to respect the rights of the Armenian people, to resolve the issue of territorial affiliation, but also to establish and maintain peace and stability in the region, particularly in the Caucasus. Summing up, I should mention that we should always rely on our own people and weapons, never expect any peacekeeping mission or support from the state.

Keywords: The Armenian-Georgian war, Transcaucasia, Armenia, Georgia, Lori-Akhalkalaki, Borchalu, territorial disputes, military actions, The First Republic of Armenia, Hovhannes Kajaznuni.

Անդրկովկասի երեք հանրապետությունների անկախության հռչակումից հետո՝ 1918 թ. մայիսի վերջին, տարածքային լուրջ խնդիրներ առաջացան հարևան պետությունների միջև: Հայաստանի առաջին Հանրապետությունը, փորձելով միջպետական հարաբերություններ հաստատել Վրաստանի և Ադրբեջանի հետ, նրանց հետ ունեցավ սահմանային վեճեր: Նոր անկախացած պետություններից յուրաքանչյուրը գտնելով, որ իր սահմաններն առաձգական են, փորձում էին դրանք մեծացնել մյուսների հաշվին: Տարածքային վեճերի առաջացման պատճառն ունի ավելի խոր արմատներ:

Հայտնի է, որ ցարական Ռուսաստանն Անդրկովկասի վարչատարածքային բաժանում կատարելիս անտեսել էր ազգային սկզբունքը: Բաժանման հետևանքով Ախալքալաքի և Բորչալուի գավառները ընդգրկվել էին Թիֆլիսի նահանգի մեջ: Տարածքային այսպիսի բաժանումը բնականաբար ձեռնտու էր Ռուսաստանին, որովհետև Անդրկովկասը պահում էր ազգամիջյան վեճերի մեջ և երկրամասն ամբողջությամբ դարձնում կառավարելի:

Ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակը նպաստավոր էր վրացիների և կովկասյան թաթարների (ադրբեջանցիներ) համար: Ստացվում է այնպես, որ վրացիները, որոնք կազմում էին Անդրկովկասի բնակչության միայն 28%-ը, ստացան երկրամասի տարածքի 33%-ը (61 հազ. քառ. կմ): 43% կովկասյան մահմեդականներին բաժին էր ընկնում 38% տարածք՝ 70 հազ. քառ. կմ.: Իսկ Անդրկովկասի բնակչության 29% կազմող հայերը, որոնք հավակնում էին միայն 54,5 հազ. քառ. կմ կամ 29% տարածքի, հայտնվեցին հարևանների տարածքային նկրտումների կիզակետում: Հայաստանի նկատմամբ Վրաստանի պահանջները, ներառյալ թուրքերի կողմից բռնագրավված Ախալքալաքի գավառը, կազմեցին 13 հազ. քառ. կմ՝ 261 հազ. հայ և միայն 7 հազ. վրացի բնակչությամբ: Հայ-

վրացական տարածայ- նություններից փորձեց օգտվել Թուրքիան վարելով երկդիմի քաղաքականություն: Վեհիիր փաշան հունիսին գրավելով հայկական մի շարք տարածքներ, մասնավորապես Լոռի-Բորչալուի հայ-վրացական վիճելի տարածքը, փորձում էր հավաստիացնել հայերին, թե այդ տարածքների գրավումը նպատակ է ունեցել թույլ չտալ ռազմական բախում Հայաստանի և Վրաստանի միջև, և որ այդ ամենը բխում է հայերի շահերից:

Իրավիճակն առավել սրվում է հոկտեմբերի 20-ին Վրաստանի պաշտպանության նախարար Գերգաձեի ներկայացրած վերջնագրից հետո, համաձայն որի հայկական բանակը քսանչորս ժամվա ընթացքում պետք է լքեր Լոռին: Հոկտեմբերի 21-ին վերջնագիրը հասնում է ՀՀ վարչապետ Հ. Քաջագունուն, որից հետո էլ գերագույն խորհրդում այն դառնում է քննարկման առարկա: Հանդիպումից հետո Քաջագունին հեռագիր է ուղարկում Նոյ Ժորդանիային՝ հրաժարվելով կատարել ներկայացված պահանջները և տալով ստույգ հիմնավորումներ: Որպես հավելում՝ հայոց պետության առաջնորդը վրացի պաշտոնակցին հորդորում է գերծմնալ ռազմական բախումներից և վեճը լուծել խաղաղ ճանապարհով:

Հոկտեմբերի 23-26-ն ընկած ժամանակահատվածում տեղի են ունենում հայ-վրացական առաջին ռազմական բախումները: Վրացական զորքերը՝ գեներալ Գիորգի Ծուլուկիձեի գլխավորությամբ, սկսում են շարժվել Լոռու ուղղությամբ: Հոկտեմբերի 25-ին վրացիները սկսում են ռմբակոծել Լոռվա սահմանամերձ գյուղերը, նախ և առաջ՝ Ծնողը: Սակայն գերմանական սպաների ներկայությունը վրացական կողմում հարկադրում է հայերին թողնել Քոբերն ու Ծաթերը: Եվս մեկ անգամ հայկական կողմը գրավում է Քոբինջ (Քարինջ) ու Ծաթեր գյուղերը, սակայն հոկտեմբերի 26-ին ստիպված են լինում թողնել այդ երկու գյուղերը: Ռմբակոծու-

թյունները երկար չեն տևում, քանի որ հոկտեմբերի 26-ին գործողությունները դադարում են [4, էջեր 207-209]:

Այսպիսով՝ հայ-վրացական առճակատման առաջին շրջանում հաջողվեց Հայաստանի վերահսկողությունը հաստատել Հարավային Լոռու վրա, իսկ հյուսիս շարժվելու փորձերն ավարտվեցին անհաջողությամբ:

Փոխադարձ անվստահության և տարակարծության ֆոնի վրա տապալվում է հայ-վրացական բանակցությունների հերթական փորձը, որն էլ հանգեցնում է իրադարձությունների հետագա զարգացումների այլընտրանքային եղանակի կիրառմանը: Հայկական կողմը աղեկվատ կերպով գիտակցում էր իրավիճակի լրջությունը և պատերազմի սկսման հավանականությունը: Այս կապակցությամբ Արշակ Չամալյանը գրել է. «*Համաձայն եմ Քաջագունու հետ, որ ծանր մտահոգությունների դուռ է բաց անում հայ-վրացական պատերազմի փոստը*»: Պատերազմի սկսմանը բացասական էին վերաբերվում նաև Հայաստանի կառավարության մյուս անդամները:

Երկխոսությունների շնորհիվ կողմերին հաջողվում է կանխել հոկտեմբերյան բախումները, սակայն դրանք բաց պատերազմական գործողությունները հետաձգում են ընդամենը երկու ամսով: Բանակցությունների փորձերի տապալումից հետո կողմերը սկսում են խնդրի լուծման այլընտրանքային եղանակներ գտնել՝ արդյունքում հանգելով պատերազմին: Կողմերը չգալով փոխադարձ համաձայնության, անխուսափելի դարձրեցին հայ-վրացական պատերազմը, որը բռնկվեց դեկտեմբերի 13-ին: Ուշագրավ է Հովհաննես Քաջագունու ներկայացրած փաստարկը, թե ինչպես սկիզբ առավ հայ-վրացական պատերազմը. «*Դեկտեմբերի սկզբերին ծագեց կարևոր հայ-վրացական պատերազմը: Երբ թուրքական բանակը՝ Ալեքսանդրապոլի վրայից անցնելով հասավ Փամբակ և գրաւեց Ղարաքիլիսան, վրացիները օգուեցին հանգամանքից ու զորքերը մտցրին Հայկական Լոռին: Պատրուակը այն էր, թե ուզում են կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը դեպի Թիֆլիս: Բայց թուրքերի հեռանալուց յետո էլ վրացիները չուզեցին դատարկել Լոռին, ընդհակառակը, եռանդուն աշխատում էին ամրացնել և յաւերժացնել իրենց տիրապետութիւն, իսկ տեղացիների դժգոհութեան արտահայտութիւնները խեղդում էին դաժանօրէն: Լոռին-կովածաղիկ էր Հայաստանի և Վրաստանի միջև, ամէինց ցաւոտը հայ-վրացական սահմանային վեճերի մեջ: Մեզ վրա ճնշում գործ դնելու նպատակով, Վրաստանը փաստօրէն կտրել էր մեր հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ, փակել էր մեր սահմանները, նույնիսկ այն հացը, որ ուղարկւում էր դրսից մեր սովամահ գաղթականութիւնը կերակրելու համար, այդ հացն էր հանդի-*

պում Վրաստանում բազմազան արգելքների ու ուշանում էր, լրիւ չէր հասնում տեղը: Վրաստանը գրաւել էր Լոռին, փակել երկայթաղին ու պաշարել մեզ, այն էր պատերազմի հիմնական պատճառը: Բսկ անմիջական առիթը՝ Լոռուայ մի քանի հայ գիւղերի սպասարթութիւնն էր եւ Վրաց կառավարութեան զործադրած անհամապատասխան խիստ միջոցները, կարծես կառավարութիւնը առիթ էր որոնում (և նույնիսկ ինքը ստեղծում) որպէսզի կոտորի ու սհարեկի հայ ազգաբնակչութիւն»[3, էջեր 137-138]:

Պատերազմը սկսվելուց հետո էլ Հայաստանի կառավարությունը փորձում էր վեճը լուծել խաղաղ ճանապարհով: Հարցը խաղաղ ճանապարհով լուծելու փորձ դարձյալ կատարեց արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը: Վերջինս կրկին դիմում է Վրաց կառավարությանը հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Ս. Տիգրանյանը իր դիմումագրում գրում էր. «*Վրաց կառավարությունը ո՛չ միայն ընդառաջ չգնաց մեր փախագին՝ սահմանների հարցը խաղաղությամբ լուծելու, այլև կամենալով ամրապնդել օտար հողի գրավումը՝ ձեռնարկեց արշավանք խաղաղ բնակչության դեմ՝ ենթարկելով արյունահեղ ու դաժան բռնությունների, մինչև իսկ հայկական գյուղերը թնդանդենների կրակի մատնելով: Հայաստանի կառավարությունը չի կարող մնալ անկարեկից դիտողի դերում, որովհետև հարևան պետության զորքերը սխրագործություններ են անում Հայաստանին պատկանող հողի վրա և գնդակահարում են Հայաստանի քաղաքացիներին: Բն կառավարությունը՝ ջերմորեն ձգտելով առաջն առնել սպազա բարդությունների՝ ուզում է հավաստալ, որ ձեր կառավարությունը՝ հարգելով ժողովրդի բաղձանքն ու Հայաստանի իրավունքը՝ կփութա սեփական նախաձեռնությամբ դուրս հանել զորքերը, հնարավորություն կտա ձեր պատգամավորությանը հարաբերության մեջ մտնել մերիկի հետ, կվերականգնե հեռագրական կապը և դրանով կամրացնե երկու հարևան հարազատ պետությունների խաղաղ կենակցությունը»* [4, էջեր 227-228]: Այս դիմումն էլ մնում է անպատասխան: Փոխարենը Ժորդանիան հայտարարում է, որ Հայաստանն է հրահրել պատերազմ: Դեկտեմբերի 13-ին Հայաստանի կառավարությունը դիմում է Դրոյին, որպեսզի Լոռիից հեռացնի վրաց զորքերին:

Դեկտեմբերի 13-15-ը ընթացած ռազմական գործողությունները կանխորոշեցին պատերազմի կարճ տևողությունը: Նախաձեռնելով ուժեղ գրոհային ճնշում, հայկական զորքերը երկու օրում գրավեցին Սանահինը, Ալավերդին: Չորքերի անմիջական հրամանատարն ու ռազմական գործողությունները կոորդինացնող Դրոն էր: Հայկական զորամիավորումների առաջին ռազմական հաջողությունները իրարանցում առաջացրին Թիֆլիսում, որի

հետևանքը եղավ այն, որ դաշնակիցների անդրկովկասյան զորքերի հրամանատար, գեներալ Թոմսոնը խաղաղարար միջնորդության նպատակով ռազմական գործողությունների վայր ուղարկեց կապիտան Գրինին: Դեկտեմբերի 15-ին Գրինը Սանահինում Դրոյին է հանձնում 7 կետից բաղկացած զինադադարի միջնորդությունը: Հայկական կողմը համաձայնվում է Գրինի առաջարկած պայմաններով գնալ հաշտության առաջադրելով մեկ նախապայման, հայկական զորքերը դուրս կգան Բորչալուից միայն այն դեպքում, երբ վստահ կլինեն, որ Ախալքալաքի գավառներ վրացական զորքերը այլևս չեն ներխուժի: Հայկական կողմի այս քայլին հակառակ, վրացական կառավարությունը հայտարարում է, որ հայկական զորքերը Բորչալուից պետք է դուրս բերվեն առանց նախապայմանի [1, էջեր 81-82]: Ստեղծված իրավիճակում Հայաստանի համար ամենաշահեկան տարբերակը պատերազմի ավարտն էր ամենամոտ տրամաբանական ժամկետում: Քանի որ վրացական կողմը ևս պատրաստ չէր զիջումներին, Դրոյի զորքերին մնում էր միայն շարունակել ռազմական գործողությունները՝ արագացնելով պատերազմի ընթացքը: Դեկտեմբերի 15-20-ը անգլիացիներին չհաջողվեց դադարեցնել ռազմական գործողությունները: Պատերազմը շարունակվեց: Դեկտեմբերի 16-ին Տեր-Նիկողոսյանի զորքերը հարձակվում է Բոլնիս-Խաչենի և Եկատերինենֆելդի ուղղությամբ: Նույն օրը Կորոլովովի աջ թևը գրավում է Այրում կայարանը: Մարտական գործողությունների առաջին երկու օրերին վրացիները հատկապես համառ դիմադրություն էին ցուցաբերում Ալավերդիում, սակայն Դրոյի ջոկատների ճնշման արդյունքում դեկտեմբերի 15-ին՝ Ալավերդին, իսկ 16-ին՝ Այրումը անցնում է հայերի վերահսկողության տակ: Դեկտեմբերի 17-ին գնդապետ Թարվերդյանը արևելքից և Փիրումյանը արևմուտքից անցնում են հարձակման, ինչի արդյունքում մեծ զոհերով ցիր ու ցան է լինում վրացական 5-րդ և 6-րդ գնդերը և սահմանապահ գվարդիական ջոկատները: Արդեն դեկտեմբերի 18-ին հայկական զորամիավորումները գրավեցին Այրումը, Ախթալան և Բոլնիս-Խաչենը: Հատկապես թեժ բախումներ են լինում Ախթալայում, որի ընթացքում հայերին հաջողվում է գերի վերցնել վրացական մի ամբողջ գումարտակ՝ գնդապետ Էրիստովայի գլխավորությամբ: Խորհրդանշական է նաև այն, որ հայկական բանակային կորպուսում կային ազգությամբ ռուս երկու ականավոր զորահրամանատարներ՝ ի դեմս Նեստերովսկու և Կորոլովի: Վերջիններս գործողություններ էին ծավալում մարտական ճակատի կենտրոնական և աջ թևերում, իսկ ամբողջ ձախակողմյան հատվածը գտնվում էր

նախկինում ռուսական կայսերական բանակի սպա Արտեմ Տեր-Նիկողոսյանի վերահսկողության ներքո: Դեկտեմբերի 19-ին իրավիճակը ռազմաճակատում համեմատաբար կայունանում է: Այդ օրվա հիմնական ձեռքբերումը լինում է այն, որ հայերը կարողանում են ամրապնդել իրենց դիրքերը Բոլնիս-Խաչենում՝ ծրագրելով ռազմական հաջողությունների հետագա զարգացումը: Հայ-վրացական պատերազմի ամենաթեժ մարտերը տեղի են ունենում դեկտեմբերի 20-22-ն ընկած ժամանակաշրջանում: Հայկական զորքերի համար հաջող զարգացող գործողությունների արդյունքում վրացական զորքերը կենտրոնացել էին Սաղախոյում:

Դեկտեմբերի 23-ին հայկական ուժերը վերադասավորվում են և մարտական գործողությունները հրնթացս սկսվում են: Ծանր ու համառ մարտերից հետո 4-րդ գնդի 12-րդ վաշտը՝ փոխգնդապետ Ասլանյանի ղեկավարությամբ, ամբողջապես գրավում են Սաղախուն: Վրացական զորքերը վերստին անհաջողության են մատնվում նաև Բոլնիս-Խաչենի մատուցներում: Դեկտեմբերի 24-ին վրացական զորքերը վերսկսեցին հարձակումը Շուլավերի ուղղությամբ՝ գյուղը և խճուղին գրավելու նպատակով:

Նկատի ունենալով Հայաստանի վատ դրությունը Քաջագունին ցանկանում էր շուտ վերջացնել պատերազմը: Հայկական զորքերի հաջողությունները ստիպեցին Դաշնակիցների ներկայացուցիչները Թիֆլիսում պահանջեցին դադարեցնել պատերազմը: Դեկտեմբերի 25-ին անգլիացի գեներալ Ռայկրոֆտը, ֆրանսիացի գնդապետ Շարդինին և Ժորճանիան ստորագրում են մի համաձայնագիր, որով և դադարեցվելու էր ռազմական գործողությունները Ջալալօղլի-Դսեղ գծից հյուսիս ընկած տարածքում: Ախալքալաքում պետք է հաստատվեր վրացական վարչակարգ: Բացի այդ բրիտանական և ֆրանսիական բանակների սպաներից պետք է կազմվեր հանձնաժողով, որը մեկնելու էր ռազմաճակատ և ձեռնամուխ էր լինելու, որպեսզի իրագործվեր համաձայնագիրը: Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանին, երբ առաջարկում են ստորագրել պայմանագիրը, վերջինս հրաժարվում է ստորագրել, բողոքելով որ վրացական զորքերը պետք է դուրս բերվեն Ախալքալաքից: Այդ պատճառով էլ Ռայկրոֆտը և Շարդինին համաձայնագրի տակ ավելացնում են, որ «Պ. Ջամալյանը համաձայն չէ Ախալքալաքի գավառը Կրաստանի կողմից գրավելու կետին»: Այսպիսով դաշնակիցները հաշվի չառնելով հայերի բողոքը, փորձում էին իրենց ստորագրած համաձայնագիրը իրագործել [2, էջ 188-190]: Մինչ հանձնախումբը կհասներ Ղարաքիլիսա դեկտեմբերի 28-ին վրացական զորքերը անցնում են հարձակման: Վրացական զորքերը հետ են

